

ՀԱԿՈՎՐՈՍ ՏԱՇՅԱՆ(ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՐ)

(1866—1933)

Փ. Փ. ԱՆԹԱՐՅԱՆ

Հայագիտության մեծանուն երախտավորներից է Հակովրոս Տաշյանը, որի գիտական վաստակը աչքի է ընկնում ինչպես իր ծավալով, ընդգրկումներով, այնպես էլ իր բովանդակությամբ խորությամբ ու հարստությամբ:

Հ. Տաշյանը ծնվել է 1866 թ. Կարինի (Էրզրում) շրջանի Արծաթի գյուղում: Տասնհինգ տարեկան հասակում, 1880 թ., ընդունվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության վարժարանը: Ուսումնական շրջանը ավարտելուց հետո, 1889 թ., ձեռնադրվում է քահանա և նույն վարժարանում փիլիսոփայության ու հայերենի ուսուցիչ նշանակվում: 1894 թ. մեկնում է Բեռլին՝ նպատակ ունենալով ուսումնասիրել տեղի պետական գրադարանի հայերեն ձեռագրերը: Նա հաջողությամբ իրագործում է իր նպատակը և միաժամանակ նկարագրում այդ ձեռագրերը: 1890—1895 թթ. վարում է «Հանդես ամսօրյայի» խմբագրապետի պաշտոնը: Ավելի ուշ, 1909 թ., որպես Վիեննայի Մխիթարյանների Կ. Պոլսի վանատան մեծավոր, նա փոխադրվում է Կ. Պոլիս, իսկ 1912 թ. վերջնականապես հաստատվելով Վիեննայի Մխիթարյանների մոտ, ապրում է այնտեղ մինչև իր մահը՝ 1933 թ. փետրվարի 3-ը:



Հ. Տաշյանը հետևողական և անխոնջ աշխատանքով ձեռք էր բերել պատմական, գրական, մատենագիտական, լեզվաբանական, աշխարհագրական, փիլիսոփայական, ինչպես և գրական գիտությունների շատ մեծ պաշար, քաջատեղյակ էր հունարենին, լատիներենին, գերմաներենին, ֆրանսերենին, իտալերենին, ռուսերենին, անգլերենին, ասորերենին, եբրայերենին, արաբերենին, թուրքերենին: Լեզուների գերազանց իմացությունը, որոնող միտքը, գիտական լայն հետաքրքրասիրությունը հնարավոր են դարձրել, որ նա լավատեղյակ լինի ուղղակիորեն հայագիտությանն առնչվող հունական, ասորական, եբրայական և լատիներական պատմա-գրական աղբյուրներին. նվրոսպայում դրանց վերաբերյալ ստիզմված հարուստ գրականությանը: Տաշյանի գրչի առաջին իսկ արդյունքները հայ և օտար հայագետների կողմից բարձր են գնահատվում: Անվանի գիտնական-հայագետ Հառնակը, ծանոթանալով նրա «Սեկունդոս իմաստասերի» վերաբերյալ գերմաներեն շարադրված աշխատությանը, անմիջապես նրան առաջարկում է Բեռլինի համալսարանի արևելյան բաժնի մատենադարանի պետի և արևելյան լեզուների ու գրականության դասախոսի պաշտոնը, որից նա հրաժարվում է՝ չուզենալով հեռու մնալ Վիեննայի Մխիթարյան միաբանությունից:

* * *

Հ. Տաշյանի անունը նախ և առաջ սերտորեն յառնչվում է հայերեն գրագրերի հետազոտությանն ու գիտական նկարագրությանը: Տվյալ բնագավառում աննախընթաց և առ այսօր չգերազանցված երկասիրություն է նրա «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյան»

ի Վիեննա՝ ստվար հատորը²։ Այստեղ սպառիչ պատասխան է տրված յուրաքանչյուր ձեռագրի «կենսագրության» արտաքին հատկանիշների և բովանդակության վերաբերյալ։ Մշակված գիտական համակարգով նշված են այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են ձեռագրի մեծությանը, թերթերին, զրույցի սյունյակներին, տողերի քանակին, զրի տեսակին, պրակներին, նյութին, կազմին, վիճակին, զարդազրույցները, խորագրերին, խորաններին, կիսախորաններին, լուսանցազարդերին, ընդօրինակման ժամանակին, վայրին, զրչին, ծաղկողին, կազմողին, ստացող պատվիրատուին, փրկողին և այլ մասնակի խնդիրներին։ Խիստ արժեքավոր են տվյալ բնագրերի հեղինակային պատկանելության և հեղինակների մասին տրված բացատրությունները, նոր տրված լայնների հիման վրա տեղ գտած գիտական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ ուղղումներն ու եզրակացությունները, ինչպես նաև աշխատությանը կցված գիտական հարուստ ապարատը (տառատեսակների, զարդազրույցների, մանրանկարների և այլ հնապարհական նշանակություն ունեցող նյութերի արտատպություններ, տեղանունների, անձնանունների, թեմատիկ ու մատենագիտական ցանկեր, նկարազրված 5,3 ձեռագրերի գերմաներեն ամփոփ նկարագրությունը)։

Պատահական չէ, որ հետազոտում հայերեն ձեռագրերի ցուցակներ կազմողները, առանց բացատրության, հետևել են Հ. Տաշյանի ավանդներին։ Հայագիտության մեջ դրանք միշտ էլ բարձր են գնահատվել³։ Հ. Տաշյանը ձեռագրագիտական բնույթի արժեքավոր հետազոտական աշխատանք է կատարում նաև հնագրության բնագավառում, քննության առնելով տառատեսակների անվանման, անունների ստուգարանային, ինչպես և կիրառման ժամանակաշրջանի վերաբերյալ խնդիրները⁴։ Նա մանրամասն խոսում է նաև կրկնագիր զրչագրերի մասին՝ քննելով հատկապես Դրանց հնագրական հատկանիշները հայերեն տառատեսակներին առնչվող հարցերի լուսարանման համար։ Նույն մանրամասնությամբ ուսումնասիրում է վիճական մինչ այդ հրատարակված Խրճանագրությունները և հնագիտական մանրակրկիտ համեմատություններով ջանում ճշտել հայ տառատեսակների առավել ծավալուն կիրառության ժամանակաշրջանների սահմանները։

Հ. Տաշյանը հնագրական պրպտումների ժամանակ ուսումնասիրության նյութ է դարձնում նաև կենտադրական նշանների կիրառության համակարգն ու առանձին դեպքերը։ Բազմաթիվ փաստերի հիման վրա բրոշակի եւրակացում է, որ արդի հայկական կենտադրական նշանները հիմնականում շատ հին են⁵։

Այսօր էլ կարելի է կրկնել նրա հետևյալ ուշագրավ գիտողությունը. «Հնագրի մը առաջին աշխատությունն ըլլալու է նույնիսկ ընդհանուր սկզբամբ վճռելու ավելի կովան գտնելու համար»⁶։ Իսկ առ մի առնուլ յուրաքանչյուր հայկական տառ ըստ ստորհասանի՝ երկաթագրեն մինչև շղագիր և փնտռել յուրաքանչյուր ձևերուն նաև ամենամիտքը տարբերությունն⁷։ Սույնը իրագործելուց հետո քանի՞ ձեռագիր պատասխանների ու ամբողջական ձեռագրերի զրչության ժամանակը կարելի կլինի ճշտել, և ինչքան կշահեն հայ մատենագրությունն ու մշակույթն ընդհանրապես. չէ՞ որ ձեռագրական մանրադույն փոփոխությունն անգամ ինչ-որ ժամանակահատվածում ծնված արդյունք է։ Այս ընդհանրացնող տեսանկյունով է նա առհասարակ քննում հնագրական բնույթի փաստերն ու երևույթները։

Հայերենի պատմության ուսումնասիրության բնագավառում Տաշյանի կատարած աշխատանքները, անտարակույս, նշանակալից են։ Այս առթիվ առաջինը հարկ է մատնանշել նրա «Ուսումնական դասական հայերեն լեզուի»⁸ ստվարածավալ աշխատությունը։ Հեղինակն այստեղ համաճառներն ներկայացնում է հայագետների մինչ այդ ստեղծած վաստակն ու հայտնած բազմաթիվ տեսակետները հայերենին առնչվող կամ ցեղակից լեզուների փոխադարձ կապերի մասին։ Նա աներկբա համամիտ է խոշոր լեզվաբան-հայագետ Հայրիկ Հյուրշմանի տեսակետին

2 Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895։

3 Հ. Տաշյանը նախապես, 1891 թ., կազմել և հրատարակել էր Վիեննայի կայսերական մատենադարանի 30 ձեռագրերի նկարագրությունը այս միևնույն սկզբունքներով ու հմտությամբ։ Տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891։

4 Հ. Տաշյան, Իկնարկ մը հայ հնագրության վրա, Վիեննա, 1898, էջ 56։

5 Նույն տեղում, էջ 153։

6 Նույն տեղում, էջ 177։

7 Հ. Տաշյան, Ուսումնական դասական հայերեն լեզուի, Առաջին դարձվածք, անգիր ժամանակը, պրակ Ա—Դ, Վիեննա, 1920։

հայերենի վերաբերյալ՝ Վերջինիս հետևությունները մերժում է հայերենը արիական լեզվախմբին հատկացնող որոշ հայագետների կարծիքը և ընդունում, թե հայերենը որքան էլ որ շատ իրանական փոխառություններ ունենա, էսպես փոփոխության չի ենթարկվել, ինքնուրույն է և բխում է հնդեվրոպական մայր լեզվից⁸։ Իր «Հաթեր և Ուրարտյանք»⁹ ընդհանուր վերնագիրը կրող մի այլ աշխատության մեջ ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով բոլոր հայագետ-լեզվաբաններին (Մեյեր, Կարստ, Ն. Մառ, Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան) հայերենի ուսումնասիրությանը նվիրված լեզվագիտական ժառանգությունը, մասնավորապես կանգ է առնում առաջ քաշված նոր տեսությունների վրա։ Կարելի է վստահորեն ասել, որ այս կապակցությամբ ոչ մի նշանակալից խնդիր չի վրիպել Հ. Տաշյանի հայացքից, և նա ամբողջական պատկերացում է տալիս հատկապես հայերենի ցեղակցության վերաբերյալ մինչ այդ արձանագրված արդյունքների մասին, հանդես բերելով իր դիրքորոշումը քննարկվող յուրաքանչյուր խնդրի նկատմամբ։

Հ. Տաշյանը միանգամայն համամիտ է որոշ գիտնականների (Հրոզնի, Ֆոտտեր) այն տեսակետին, թե խուրրիներենը ռուսյան է միտաներենի հետք, հետևարար նույնն են խուրրին ու միտանին¹⁰, բայց «...դո՛ւն տարապայման չափազանցություն մըն է խուրրիները կամ հուրրիները համարիլ իրր Փոքր Ասիական (կամ «Հայաստիս») ցեղին հետ նույնացած ժողովուրդ մը»¹¹։ Նա այս առիթով համառոտ, բայց կուռ ու գիտականորեն պատճառաբանված խորհրդածություններ է անում նաև հայ ժողովրդի ծագումնաբանության մասին, մերժում է հայ ժողովրդի փոյուզական ծագման վերաբերյալ տեսությունները¹² ու գտնում է, որ Ծոփքը, Աղձնիքը, Հայասան, «Իհարկն նաև՝ Արարատյանք (կամ՝ «ալլարոտյանք») կամ ուրարտացիք... կազմած են հայ ազգին զխավոր զանգվածը»¹³։

Հ. Տաշյանը պատմական Հայաստանի վաղագույն շրջանի հողային տարածքի հատկապես արևմտյան մասի սահմանները, դավառների (մասնավորաբար՝ Փոքր Հայք) ու քաղաքների մասին գրել է մի շատ արժեքավոր աշխատություն, որը հրատարակության է տրվել հետմահու¹⁴։ Այն հայ ժողովրդի պատմության շարադրանքն է վաղագույն ժամանակներից մինչև ժժ դարը՝ դիտված նրա և հարևան ժողովուրդների պատմա-քաղաքական հարաբերությունների ընդհանուր ֆոնի վրա։ Սույն երկը արժեքավոր է նաև Ուրարտու-Հայք պատմական, աշխարհագրական, ցեղակցական, ազգագրական և լեզվական հարցերի ուսումնասիրության համար։

Հ. Տաշյանը այս երկն ստեղծելու համար դրեթե սպառիչ կերպով օգտագործել է հայ և օտար հին մատենագրությունը, նվիրողալուով հայտնի բոլոր համապատասխան գիտահետազոտական աշխատությունները, հնագույն սրձանագրությունները, հիմնվել է պատմա-աշխարհագրական, լեզվական, ազգագրական, մարդակազմական փաստերի և օրինաչափությունների վրա։

Համրավաշատ գիտնականի տարերքը հանդիսացել է բանասիրական ամենամանրախնդիր որոնումներով պայմանավորված հետազոտական աշխատանքը։ Ըստ էության, նման աշխատանքի արդյունք են նրա բոլոր երկասիրությունները, որոնցից յուրաքանչյուրը բանասիրական քննական աշխատանքի հիանալի օրինակ է։ Այդպիսին է առաջին հերթին նրա «Մատենագրական մանր ուսումնասիրությունը»¹⁵ շատ արժեքավոր աշխատությունը։ Փորձենք համառոտակի ներկայացնել այդ աշխատանքի հիմնական արդյունքները։

Այստեղ քննարկվող թեմաներից առաջինը վերաբերում է «Յադագս րնութեան մարդոյ» հունարենից հայերենի թարգմանված մարդակազմական ուշագրավ բնագրին առնչվող հարցերին։ Մանրամասն քննությունից Հ. Տաշյանը հետևեցում է, որ սույն երկը Դրիգոր Նյուսացունը չէ, ինչպես առհասարակ ընդունված է մեր ձեռագրերում, այլ՝ Նեմեսիոս Նեմեսացունը։ Թարգմանված է հունարեն բնագրից 716—717 թթ. Դավիթ Շյուպատոսի կողմից, իսկ Ստեփանոս Սյունեցին միայն վերանայել և սրբագրական ու խմբագրական աշխատանք է տարել նրա վրա։

8 Նույն տեղում, էջ 15։

9 Հ. Տաշյան, Հաթեր և Ուրարտյանք, մատենագիտական ուսումնասիրություն, Վիեննա, 1934։

10 Նույն տեղում, էջ 190։

11 Նույն տեղում, էջ 219։

12 Նույն տեղում, էջ 340։

13 Նույն տեղում, էջ 341։

14 Հ. Տաշյան, Հին Հայաստանի արևմտյան սահմանը, Փոքր Հայքը և Կողովանք (ՍԼ-բաստիա)..., Վիեննա, 1948։

15 Հ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրություն, Ա, Վիեննա, 1895, Բ, Վիեննա, 1901։

Երկրորդ նյութը նշանավոր հույն իմաստասեր Պրոկղի և, հատկապես, նրա «Շաղկապք աստվածաբանականք» երկի մասին է։ Խոսելով նրա կենսագրական մանրամասնությունների, երկերի փիլիսոփայական հիմնական առանձնահատկությունների շուրջ, Հ. Տաշյանը վիճարկում է Գարեգին Զարբհանյանի¹⁶ փաստերն ու կարծիքները։

Մանրամասնորեն խոսելով «Շաղկապք աստվածաբանականք» աշխատության թարգմանության հանգամանքների ու որակի մասին, նա համաձայնում է Ֆ. Կոնիքերի այս կապակցությամբ արտահայտած այն կարծիքին, թե եղել է հայերեն սույն թարգմանության ավելի նախնականը, որից առանց երկմտության թարգմանված է եղել վրացերենի և ապա վրացերենից վերստին հայերենի¹⁷։

Նա միաժամանակ նշում է, որ սույն թարգմանությունը հույն բնագրի համեմատությամբ «շատ թերի» է¹⁸։

Հաջորդ թեման վերաբերում է Խոսրովիկ թարգմանչին։ Հետազոտելով Խոսրովիկ թարգմանչի անձնավորությանն ու սպրած ժամանակին առնչվող փաստերն ու հանգամանքները, Հ. Տաշյանը եզրակացնում է, որ անհիմն է Միսրանի (Գալուստ Տեր-Մկրտչյան) կարծիքը, թե իբր իր հրատարակած «Արտասանութիւն Խոսրովկայ թարգմանչի ի մենամարտին Դաւթի և Գողթաթու» երկը V դարից է, նրա հեղինակը, որ Ղազար Փարպեցու հիշատակած Խոսրովիկն է, նույնպես այդ դարին է պատկանում¹⁹։ Գլուտ Աղանյանցը ևս իրավացի չէ, երբ այդ երկն ու նրա հեղինակին տեղադրում է VII դարում՝ մերժելով Խոսրով Անձևացուն Խոսրովիկ թարգմանչի հետ նույնացնելու վարկածը²⁰։ Հ. Տաշյանի կարծիքով ավելի ճիշտ ու իրավացի է Բարսեղ Սարգիսյանը, որ Խոսրովիկին VIII դարի հեղինակ է համարում՝ հիմնվելով ստույգ փաստերի վրա²¹։

Ինչպես հայտնի է, հետադաշում Խոսրովիկի անձնավորությանն ու երկերի վերաբերյալ Դաւթեգին Առվսեփյանի ամբողջական և հմտալից ուսումնասիրությունները լիովին հաստատեցին նրա հիմնական եզրահանգումները²²։

Քննարկվող չորրորդ նյութը վերաբերում է Գալուստ Տեր-Մկրտչյանի հրատարակած մի այլ բնագրին, որը «Գիրք հերձուածոց» անունն է կրում։ Հ. Տաշյանը համաձայն է հրատարակչի այն կարծիքին, թե հիշյալ բնագիրը ռուղղակի կամ անուղղակի կապ պետք է ունենա Եպիփան Կիպրացու զուխործոց Panarium-ի կամ «Հերձուածոց» գրքի հետ։ Լրացնելով այս ենթադրությունը, նա աստատում է, որ հրատարակված բնագիրը ավելի շուտ աղավաղված թարգմանությունն է Եպիփան Կիպրացու «Հերձուածոց» գրքի զուխների ցանկի²³։

Հ. Տաշյանը հրատարակել է նաև քննարկված բնագիրը՝ համեմատելով այն հունարեն գիտական բնագրի հետ, նշելով տարբերությունները, տալով ծանոթագրություններ ու բացատրություններ²⁴։

Քննության առնված հաջորդ կարևոր նյութը վերաբերում է Սեկունդոս իմաստասերին։ Այս հարցում Հ. Տաշյանը մի անգամ ևս ցուցաբերում է իր լեզվագիտական, գրականագիտական, բնագրագիտական լայն հմտությունը և բանասիրական կարողությունները։ Համառոտակի ներկայացնելով Սեկունդոսի կենսագրությունը, նրա մասին եղած օտարլեզվյան ուսումնասիրությունները, մասնավորապես տալիս է ֆրանսիացի գիտնական Ռեյուի տեսակետների համադիր շարադրանքը։ Նա ասորական թարգմանության վերաբերյալ պաշտպանում է Պալսմանի ենթադրությունը, ըստ որի այն կատարված է ոչ թե լատիներենից, այլ հունարենից և թեև որոշ չափով թերի է, բայց եղած բոլոր թարգմանություններից ամենաարժեքավորն է²⁵։

16 Գ. Զարբհանյան, Մատենադարսն հայկական թարգմանությանց նախնյաց, Վենետիկ, 1889, էջ 666—669։

17 Հ. Տաշյան, Մատենադարական մանր ուսումնասիրությունք, Ա, էջ 28—29։

18 Նույն տեղում, էջ 45։

19 Նույն տեղում, էջ 64։

20 Նույն տեղում, էջ 65։

21 Նույն տեղում, էջ 66։

22 Գ. Հռվսեփյան, Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրությունք նորին, Վաղարշապատ, 1903, էջ 4—5։

23 Հ. Տաշյան, Մատենադարական մանր ուսումնասիրությունք, Ա, էջ 79, 82։

24 Նույն տեղում, էջ 115—146։

25 Նույն տեղում, էջ 190—191։

Հայերեն թարգմանությանն անդրադառնալով հանգամանորեն, դտնում է, որ եղած բոլոր թարգմանություններից, նույնիսկ ասորականից, ավելի հին է²⁶։

Հիշյալ աշխատության երկրորդ հատորի առաջին նյութը՝ միջազգային բանասիրության մեջ վաղուց քննության առնված խիկար իմաստունի և նրա խրատների հարցն է, անշուշտ, առավելաբար դիտված հայադիտության տեսանկյունից։

Շատ ու բազմազան են այս նյութին առնչվող հարցերը, որոնք բանասիրական, մատենագիտական ու բնագրագիտական յուրջ հետազոտման են ենթարկվում մեծանուն գիտնականի կողմից։ Հ. Տաշյանը գիտական ստույգ սլարդաբանումն է տալիս հարցի պատմության մասին, թե խիկար անունը ինչպիսին է, ով է նա, ինչ ծագում ունի, ինչով և ինչպես է հայտնի դարձնել ժողովուրդներին, ինչ ընդհանրություն կամ ազդեցություն են խիկար, Եղովպոս, Լոկման անունները և դրանց առնչվող բնագրերը, ում է պատկանում վաղեմիության կամ առաջնության իրավունքը, ինչ տեսակետներ կան այս կապակցությամբ, որոնք են իրավացի և այլն։ Դիմելով ակնառու ընդհանրացումների, նա հստակորեն մատնանշել է, թե ինչպիսին է Եղիլ խիկարի խրատների՝ «կատարած դերն ու ըրած ազդեցությունը» համաշխարհային դրականության մեջ, ինչ փոխադարձ կապ կարող էր լինել և կա նրան և Տովրիտի դրքի, Հին ու Նոր կտակարանների ու անվավեր գրությունների միջև։ Բնական է, այդ վերջին խնդիրների լուսաբանությունը նա կատարել է առավելապես բազմալեզվյան բնագրագիտական որոնումների հիման վրա, հաճախ զուգահեռ համեմատություններ ներկայացնելով ընթերցողին որպես անեղիբա ապացույց²⁷։ Հաստատելով հայերեն թարգմանության մասին հայադետ Ֆ. Կոնիբերի ենթադրությունը, ըստ որի այն «Երկար պատմություն մը ունեցած ըլլալու է», այլևայլ խմբագրությունների ու փոփոխությունների ենթարկված, և կարող են հայ մատենագրության մեջ նոր հիշատակություններ ի հայտ գալ, որոնք նրա իրագործման ժամանակը շատ ավելի վաղ շրջան կհասցնեն՝ այս կապակցությամբ մի շարք փաստեր է բերում, այդ թվում և Ղազար Փարպեցու մի վկայությունը, որը արդեն հայտնի էր Ն. Կոնիբերին, Եղիշեի և Եղնիկի մոտ եղած հետքերը, Թովմա Արծրունու «բացահայտ» հիշատակությունը և այլն, որոնք հայերեն թարգմանությունը հասցնում են մինչև V դար։ Բնագրերի թեկուզ և ոչ բառացի համեմատությունը գիտնականին թույլ է տվել ասելու, որ հայերենը պիտի թարգմանված լինի ասորերենից։

Հ. Տաշյանը հատուկ ուսումնասիրության նյութ է դարձնում նաև Ազապետոսի կյանքը, նրա Հուստինիանոս կայսեր ուղղված իրատական գրությունը և մի շարք հարակից հարցեր՝ կապված հեղինակի անձնավորության, երկի բնագրի, հայերեն թարգմանության, տեղի, ժամանակի, թարգմանչի ու հրատարակությունների հետ։ Հիմնական եզրակացությունն այն է, որ Ազապետոսը համանուններից նա է, որ ս. Սոփիա տաճարում եղել է սարկավազ և Հուստինիանոս կայսեր դաստիարակը, ուստի ապրել է VI դարում։ Նրա հիշյալ երկը մեզ է հասել երկու խմբագրությամբ, շատ որոշ չէ թարգմանության ժամանակը, թեև Գևորգ Պալատեցին բնագիրը հրատարակելիս որոշ միջամտություններ կատարել է, բայց նա չէ թարգմանիչը, այլ ավելի վաղ ապրած մի Գևորգ²⁸։

Այս աշխատության մեջ Հ. Տաշյանը անդրադառնում է «Աբգարի զրույցին» վերաբերող 1900 թ. Եփեսոսում հայտնաբերված մի արձանագրության, որի շուրջը բավականին աշխույժ բանավեճ է գնացել դրա վավերականությունը ընդունողների ու չընդունողների միջև։ Նա այս խընդրով զբաղվում է այնչափով, ինչ չափով այն որպես «Աբգարի զրույց» առնչվում է հայ վաղ շրջանի թարգմանական (Եվսեբիոս Կեսարացի, Լարուբնա) և ուրույն (Մովսես Խորենացի, Լովհանես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Ասողիկ, Ուխտանես և ուրիշներ) գրականությանը։ «Աբգարի զրույցին» Հակովբոս Տաշյանը անդրադառնում է նաև այլ առիթներով՝ նա բանասիրական հետազոտության է ենթարկում եվրոպական գիտնականների կողմից «Աբգարի զրույցի» ասորական և հայկական տարբերակների, ասորական ու հայկական մատենագրության մեջ գտած անդրադարձի և ունեցած ազդեցության նշանակության վերաբերյալ ուսումնասիրությունները։ Հատկապես կանգ առնելով այդ զրույցի մասին Մովսես Խորենացու պատմածի վրա, գտնում է, որ նա իրապես էլ օգտվել է Լարուբնայի ոչ թե ասորական բնագրից, այլ հայե-

²⁶ Այս նյութի վերաբերյալ Հ. Տաշյանը նախապես հրատարակել էր գերմաներեն հետևյալ աշխատությունը՝ „Das Leben und die Sentenzen des Philosophen Secundus des Schweig-samen in Altarmenischer Uebersetzung, Wien, 1895.

²⁷ Հ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրությունը, Բ, էջ 76—104։

²⁸ Նույն տեղում, էջ 229—232։

րեն թարգմանությունից, որը կատարված պիտի լինի V դարի սկզբներին, բանի որ այն ծանոթ է եղել նաև Աղաթանգեղոսին, Փավստոս Բուզանդին²⁹:

Այս շարքի վերջին նյութն է VII դարի բյուզանդացի մատենագիր Պիսիդեսի վեցորդա արարչագործությանը նվիրված չափածո երկի հայերեն թարգմանությունը: Այդ թարգմանությունը, ըստ Տաշյանի վերջնական եզրակացության, ամենայն հավանականությամբ իրագործված է VIII—IX դդ.: Թերևս Ստեփանոս Սյունեցու կողմից, ինչպես նախապես ենթադրել էր Աթանաս Տիրոյանը³⁰:

2. Տաշյանը աղբյուրագիտի ու բանասերի իր լայն հմտությունը հանդես է բերում նաև մի այլ ուշագրավ աշխատության մեջ³¹, որը Պոլ լագարտի „Analesta Syriaca“ ժողովածուի մեջ հրատարակված ասորական մի բնագրի (հեղինակ՝ Գևորգ Արաբաց եպիսկոպոս) վերաբերյալ իր կատարած բանասիրական որոնումների ծնունդն է: Տաշյանը ցույց է տալիս, որ սույն բնագրի Ա, Բ, Գ և Ե գլուխները «ուղղակի կամ անուղղակի հայոց մատենագրության հետ սերտ կապակցություն ունեցող նյութերու վրա կճառեն», իսկ հինգերորդ գլուխը՝ «Գրիգոր Լուսավորչին «կենսագրութեան», ուստի՝ Աղաթանգեղյա վրա է»³²: Իր խոսքը փաստացի դարձնելու համար նա նշված բնագրից և Աղաթանգեղոսի երկից բնագրական զուգահեռ համեմատություններ է բերում, որոնք անճրկբա հաստատում են իր այս վարկածի ճշմարտացիությունը: Նա ընդգիծանում է Բարսեղ Սարգիսյանին, որը Կորյունին համարում էր Աղաթանգեղոսի գրքի խմբագրողը, մինչդեռ ճիշտն այն է, որ Աղաթանգեղոսն է օգտվել Կորյունի երկից³³: Աղաթանգեղոսը հայ է, «հայագետ», որը քաջ հմուտ է ոչ միայն հայերենին, այլև Հայաստանի աշխարհագրությանը, դիցաբանությանը, սովորույթներին: Նա ժամանակակից ու ականատես չէ իր նկարագրած անցուղարձերին: Որոշ հատվածներ հետազոտության նյութ դարձնելով, Հ. Տաշյանը գտնում է, որ դրանք կարող էին գրվել միայն V դարում, հետևաբար, Աղաթանգեղոսը ապրել է նույն դարում:

Բանասիրական-մատենագրական արժեքավոր աշխատություն է նաև այսպես կոչված Սուտ Կալիսթենեսի «Վարք Աղեքսանդրի» երկին նվիրած նրա ուսումնասիրությունը³⁴:

Նախապես հիշյալ բնագրի մասին ընդհանուր տեղեկություններ հաղորդելուց հետո կանգ է առնում հայերեն թարգմանության վրա, նշում, թե այն ավելի վաղ է կատարված հույն բնագրից, քան ասորերենը, պահլավերենը, մանրակրկիտ համեմատություններով ցույց տալիս, որ հայտնի է եղել մեր դրեթե բոլոր մատենագիրներին, այդ թվում հակադարձ կարգով հատկապես՝ Խաչատուր Կեչառեցուն, Մխիթար Գոշին, Գրիգոր Մադիստրոսին, Թովմա Արծրունուն, Սեբեոսին, Մովսես Խորենացուն: Մասնավորապես ուշագրության է արժանացնում վերջինիս պարագան, որը ընդարձակ և բնույթի քաղվածքներ ունի «Վարք Աղեքսանդրի» բնագրից: Հիմք ընդունելով այս առնչությունը, ճիշտ է համարում որոշ բանասերների, առաջին հերթին Ռաֆայել Թրյանի, տեսակետը, ըստ որի Մովսես Խորենացին էլ հանդիսացել է սույն բնագրի թարգմանիչը³⁵: Զարգացնելով այս թեզը, կարծիք է հայտնում, որ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» և հիշյալ բնագրի վրա աշխատելիս է եղել միաժամանակ, մինչև 486 թ.³⁶:

Հ. Տաշյանը բանասիրական-բնական աշխատանքներ է տարել միաժամանակ կանոնադրական բնույթի երկերի ուսումնասիրության բնագավառում: Այս առումով ուշագրավ նվաճում է «Վարդապետութիւն առաքելոց» կանոնական բնագրին նվիրված սովորածավալ աշխատությունը³⁷: Նախապես համակողմանի լուսաբանված են սույն բնագրի գրության ժամանակի, վայրի, բնագրագիտական, մատենագիտական ու հարակից խնդիրները, ասորական գրականության մեջ

²⁹ Հ. Տաշյան, Սկզբնավորությունը եղեսիո Լեկղեցւոյն և «Արգարու զրույցը», «Հանդես ամսօրյա», 1890, 47—51, 63—67, Zur Abgar-Sage von p. i. Y. Dashian, Wien, 1890.

³⁰ Հ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրությունը, Բ, էջ 366, 372:

³¹ Հ. Տաշյան, Աղաթանգեղոս առ Գևորգ և ուսումնասիրություն Աղաթանգեղյա գրոց, Վիեննա, 1891:

³² Նույն տեղում, էջ 1—2:

³³ Նույն տեղում, էջ 79:

³⁴ Հ. Տաշյան, Ուսումնասիրությունը Ստույն-Կալիսթենյա վարույց Աղեքսանդրի, Վիեննա, 1892:

³⁵ Նույն տեղում, էջ 70, 72:

³⁶ Նույն տեղում, էջ 77:

³⁷ Հ. Տաշյան, «Վարդապետութիւն առաքելոց» անվավերական կանոնաց մատյանը, Վիեննա, 1896:

Նրա տեղի ու նշանակության հարցը, միաժամանակ համառոտակի քննության են առնված եղած ուսումնասիրություններն ու հրատարակությունները և այլն:

Գիտական բանասիրական և համեմատական հսկայական աշխատանքի արդասիր է «Պատարագամատոյց» մատյանի ուսումնասիրությունն ու քննական բնագործի հրատարակությունը, որը իրագործվել է Հովսեփ Գալբրանի և իր Հ. Տաշյանի կողմից³⁸:

Հայագիտության մեջ դրամագիտության բնագավառում թերևս ամենից քիչ աշխատանքներ են կատարված և քիչ արդյունք է ձեռք բերված: Այս բնագավառում առավել աչքի ընկնող դերն ու նշանակությունը վերապահված են Հ. Տաշյանի երկերին: Նա Արշակունի դրամների ուսումնասիրությանն է նվիրել երկու հատոր³⁹. դրանց մանրամասն գնահատությունը մեզ հեռուն կտաներ. բավականանա՞նք նշելով հեղինակի հմտալից պատմա-բանասիրական աշխատանքը և նրա գիտական բարձր նշանակությունը:

Պատմա-աշխարհագրական և ազգագրական ոչ ծավալուն մի ակնարկի մեջ⁴⁰ Հ. Տաշյանը բաղմամբով արժեքավոր տեղեկություններ է հաղորդում «Սև ծովու ափանց վրա» երբեմնի ապրող հայ բնակչության և նրա բնակած երկրամասի վերաբերյալ:

1915 թ. հայ ժողովրդի աննախընթաց ողբերգությունը չափազանց ծանր է անդրադարձել Հ. Տաշյանի վրա: Որպես գիտնական-բաղադրիչ նա այդ օրերի աշխատություններին է նվիրել մի աշխատություն⁴¹, որտեղ զերազանցապես գերմաներեն վավերագրերի հիման վրա կուռ ու ղուսպ շարադրանքով տվել է թուրք-գերմանական ռամպոլովություններում հայ ժողովրդին վիճակված անասելի տառապանքների, սպանությունների, բռնի կրոնափոխության, աքսորի ու սրտազաղթի պատմությունը: Նշելով Թուրքիայի անօրինակ վայրագությունները, հատկապես շեշտում է Գերմանիայի մեղսակցությունը:

Թեև «Ժողովածույք Առակաց Վարդանա» աշխատությունը Հ. Տաշյանի ինքնուրույն սեփական երկը չէ բառիս իսկական իմաստով, այլ պարզապես վաստակաշատ հայագետ Նիկողայոս Մառի եռահատոր ստվար աշխատության համառոտ, «թարգմանաբար հորինված» ամփոփումը. բայց և այնպես նա բաղմամբով առիթներով իր անհատական միջամտություններն ունի, քննարկվող հարցերի նկատմամբ մի շարք լրացումներով ու ծանոթագրություններով բանասիրական օգտակար հերքում է կատարում: Այս աշխատությամբ նա անվանի գիտնականի հայագիտական նշանակալից ներդրումը ներկայացնում է հայ հասարակության ավելի լայն շրջանակներին ու դրանով մի անգամ ևս նպաստում հայ միջնադարյան գրականության համընդհանուր ճանաչումը գտնելուն:

Մեծ են Հ. Տաշյանի ծառայությունները նաև օտար հայագետներին արժեքավոր աշխատությունները թարգմանաբար հրատարակելու գործում: Ը զեպ, հարկ է նշել, որ նա երբեք չանդես չի գալիս սոսկ որպես լրացմանիչ: Շատ առիթներով նա իր գիրքերումը նկատել է տալիս, և մի բացատրությամբ, ծանոթագրությամբ, մի ճշտումով կամ լրացմամբ իր օգտակար գիտական խոսքն ասում:

Այդ թարգմանություններից են.

Ա. Հայագետ Ա. Կարիերի Մովսես Խորենացու աղբյուրներին նվիրված երկհատոր աշխատությունը⁴²: Երկասիրության թարգմանության նշանակությունը որոշ է, քանի որ առնչվում է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» գրքի աղբյուրները և հորինման ժամանակը՝ ճշտելու և այնքան շատ արժարժված հարցին, մանավանդ, երբ հեղինակը հայտնի է ավանդական տեսակետներից իր շեղումներով:

Բ. Անգլիացի հայագետ Ֆ. Կոնիքերի «Քննությունը գրող Դավթի Անհաղթի»⁴³, որը հետաքրքիր մի ուսումնասիրություն է Դավթի Անհաղթի երկերի մասին: Թարգմանիչը նաև ծանոթագրություններ է տվել, գրել է օգտակար «Աղգ» և աղբյուրներ ղեկավարել մի «Հավելված»՝ Արիստոտելի «Յաղագս Աստուծոյ» երկի բնագիրը:

38 Հ. Գալբրան, Սրբազան Պատարագամատոյցը հայոց, հրատարակելով հանդերձ հավելվածով ի Հ. Յակովրոսի Տաշյան, Վիեննա, 1897:

39 Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, մասն Ա, Վիեննա, 1917, մասն Բ, Վիեննա, 1967:

40 Հ. Տաշյան, Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին..., Վիեննա, 1921:

41 Հ. Տաշյան, Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ. մասն Ա, Վիեննա, 1938:

42 Ա. Կարիեր, Նորագույն աղբյուր Մովսեսի Խորենացու (թարգմ. Հ. Տաշյանի), Ա, Վիեննա, 1893, Բ, Վիեննա, 1894:

43 Ֆ. Կոնիքեր, Քննությունը գրող Դավթի Անհաղթի, Վիեննա, 1893:

Գ. «Ուսումնասիրությունը հայերենի փոխառյալ բառից: Այստեղ ամփոփված են երկու անվանի հայագետների՝ Հ. Հյուրչմանի «Սեմական փոխառյալ բառեր հին հայերենի մեջ», «Հայկական հատուկ անվանք» և Կ. Բրոկելմանի «Հունական փոխառյալ բառեր հայերենի մեջ» աշխատությունները⁴⁴։

Ինչպես որոշակի երևում է թարգմանված երկերի խորագրերից, նրանք վերաբերում են հիմնականում հայերենի փոխառություններին, ուստի շահեկան են հատկապես հայերենի պատմության ուսումնասիրության համար։

Դ. Ֆ. Օսվալդի «Երկրախոսություն Հայաստանին»⁴⁵, Այս աշխատությունը շատ ուշագրավ ուսումնասիրություն է, առաջինը իր տեսակի և ընդգրկումների մեջ, որն այնքան բազմակողմանի ու մանրամասն ներկայացնում է Հայաստանի երկրաբանական կազմությունը, խոսում հանքային հարստությունների, դրանց տեսակների, հանքային ջրերի, լճերի, լեռների, քարերի, գետերի և այլնի մասին։ Հեղինակը, որը ինչին ուղեկցել էր որպես երկրաբան, անձամբ ականատես է եղել այս ամենին և ստուգել իր ուսումնասիրած նյութը։ Թարգմանությունը կատարված է գերմաներեն համառոտ մի փոխադրությունից և ոչ անգլերեն բնագրից։

Ե. Պ. Ֆեթթերի «Հայկական աշխատասիրությունը» երկը⁴⁶, որտեղ ամփոփված են նրա գրեթե բոլոր այն գործերը, որոնք նվիրված են հայ մատենագրության (առավելապես V դարի) ու ասորական, բյուզանդական բնագրերի փոխադարձ առնչություններին վերաբերող պատմաբանասիրական մի շարք հարցերին։

Զ. Ա. Կարիերի մեկ այլ աշխատությունը՝ նվիրված հայ հեթանոսական մեհյաններին՝ ըստ Աղաթանգեղոսի և Մովսես Խորենացու⁴⁷, որը Հայաստանի վաղ շրջանի պատմության ուսումնասիրության համար բանասիրական օգտակար երկ է։

Է. Հին հայերեն ցուցական դերանունների մասին Հ. Պեդերսոնի լեզվաբանական-քերականագիտական հետաքրքիր աշխատությունը⁴⁸։

Ը. «Պոնտական ուսումնասիրությունը»։ Սույն ընդհանուր վերնագրի տակ նա թարգմանաբար զետեղել է ուղեգրական երկու աշխատություններ. առաջինը պատկանում է անգլիացի Հ. Գ. Կ. Անդերսոնի գրչին և ունի «Հետազոտական ուղևորություն ի Պոնտոս»⁴⁹ խորագիրը, իսկ երկրորդը՝ ֆրանսիացի Ֆրանց և էոմեն Կյումոն եղբայրների հեղինակությունն է ու կոչվում է «Ուղևորություն հնախոսական հետազոտության ի Պոնտոս և ի Փոքր-Հայաստան»։ Այս երկերը թեև հիմնականում միևնույն երկրամասերին են վերաբերում, բայց իրար չեն կրկնում, ընդհակառակը, լրացնում են։ Շատ օգտակար է սույն թարգմանությունը Հայաստանի հնագույն շրջանի տեղի-տորիալ բաժանման, տեղագրության, տեղանունների ճշգրտման և այս բնույթի այլ հարցերի լուսաբանության համար։

Թ. Վիկտոր Շարոյի պատմա-աշխարհագրական մի ուսումնասիրությունը⁵⁰։ Բավականին սովոր այս երկի թարգմանության շարժառիթը հիմնականում այն է, որ շատ կարևոր տեղեկություններ ու դիտողություններ է պարունակում նաև Հայաստանի աշխարհագրության, սահմանների, ճանապարհների, տեղագրության, արդյունահանության, ուղևորության հետաքրքրություն ներկայացնող խնդիրները, ինչպես և հնագույն շրջանի պատմության վերաբերյալ։

Հ. Տաշյանի վաստակի մի կարևոր մասը կազմում են նրա բազմաթիվ հոդվածները, հրապարակված «Հանդես ամսօրյայում», որոնց նյութը բացառապես հայագիտական է։ Մենք հատուկ կանգ չենք առնում դրանց վրա ոչ միայն տեղի սղության պատճառով, այլև նրա համար, որ դրանց

⁴⁴ «Ուսումնասիրությունը հայերենի փոխառյալ բառից...», թարգմանեց Հ. Հակովբոս Տաշյան, Վիեննա, 1894։

⁴⁵ Ֆ. Օսվալդ, Երկրախոսություն Հայաստանի, թարգմանեց և ծանոթագրությունները փոխադրեց Հ. Հակովբոս Տաշյան, Վիեննա, 1933։

⁴⁶ «Հայկական աշխատասիրությունը հայագետ Պ. Ֆեթթերի ի մի ամփոփված և թարգմանված հանդերձ ծանոթագրությամբ ի Հ. Հակովբոս Վ. Տաշյան», Վիեննա, 1895։

⁴⁷ Ա. Կարիեր, Հեթանոս Հայաստանի ութ մեհյաններն Աղաթանգեղոսի և Մովսես Խորենացու համեմատ, թրգ. Հ. Հակովբոս Վ. Տաշյան, Վիեննա, 1899։

⁴⁸ Հ. Պեդերսոն, Հին հայերեն ցուցական դերանունները, Վիեննա, 1907։

⁴⁹ «Պոնտական ուսումնասիրությունը, մասն Ա, Հետազոտական ուղևորություն ի Պոնտոս Հ. Գ. Կ. Անդերսոնի, մասն Բ, Ուղևորություն հնախոսական հետազոտության ի Պոնտոս և ի Փոքր-Հայս Փր. և Եվգ. Կյումոն եղբայր», թարգմանեց Հ. Տաշյան, Վիեննա, 1919։

⁵⁰ Վ. Շարո, Եփրատի սահմանադուխը Պոմպեոսի ժամանակին մինչև արաբացվող աշխարհակայությունը, թարգմանեց Հ. Հակովբոս Տաշյան, Վիեննա, 1960։

մի ծանրակշիռ մասը թարգմանությունն է եվրոպական հայադեմոստի հայադիտական զանազան ուսումնասիրությունների, որոնք մեր անմիջական նպատակից դուրս են մնում, իսկ գիտական ուրույն հոգվածաշարերը, քիչ բացառությամբ, նա ավելի ուշ լույս է ընծայել առանձին դրբերով, որոնք սույն հոգվածում հնարավորին չափ արդեն ներկայացվել ու ղեկահատվել են:

Քաջ հայտնի է, որ մեծ նշանակություն կունենա հայադեմոստի բաղմաթիվ արխիվներում ցրված՝ Հ. Տաշյանից մնացած արխիվային փաստաթղթերի (առավելապես՝ նամակներ) հետազոտ ուսումնասիրությունը:

Հ. Տաշյանը ունի մի շարք դեռևս անտիպ աշխատություններ, որոնք նույնպես հայադիտական բովանդակություն ունեն և, չենք կասկածում. սլաոմա-բանասիրական բարձր արժեք, ինչպիսի սլարգ վկայում է «Հանդես ամսօրյայի» վերջին համարներում սլարերարար լույս ընծայված նրա հայ մատենագրության սլաոմության վերաբերյալ հոգվածաշարը⁵¹: Միայն ավսոսալ կարելի է, որ մեծանուն բանասերը անավարտ է թողել այն:

Հ. Տաշյանի հայագիտական վաստակը բացառապես փաստացի և տրամաբանորեն ներհուն խոսքի շնորհիվ հաստատուն կշիռ ու դիտական անհերքելի արժեք է ստացել: Ակներև է նրա երախտիքը հատկապես աղբյուրագիտական, բնագրագիտական, սլաոմա-բանասիրական աշխատանքների բնագավառում, հետադոտական աշխատանքի նրա լիովին գիտական-քննական եղանակը, որի մասին ինքն այսպես է վկայում. «...թե իրեն ինչ էին նախնարար՝ անկեղծորեն քննել անհրաժեշտ է այս օրս և քննել այնպես, ինչպես դիտությունը կսահանջե, եթե ասով շատ մը ավանդական, դարերի ի վեր տարածված և սիրելի եղած կարծիքներ և զրույցներ ջրվին: Ճշմարտությունը երևան հանել սլարտք է ամեն բանասիրի, և այս եղած է միայն մեր նպատակը»⁵²:

Ոչ միայն հայ մատենագրության, ոչ միայն հայերեն հնագույն թարգմանությունների, այլև հայերենի սլաոմության զարգացման, ունեցած ներքին օրինաչափությունների ու հնարավորությունների, Հայաստանի սլաոմական աշխարհագրության, տեղագրության, հայ ժողովրդի սլաոմության առավելապես վաղագույն շրջանի, հայերեն կանոնագրական ժառանգության, ազգագրության, դաղթօջախների, 1915 թ. համահայկական ողբերգության, արտագաղթի և այլ հարցերի վերաբերյալ նրա ուսումնասիրությունները, ըստ մեծի մասին, գիտական արժեքավոր ներդրում են հայագիտության մեջ:

51 Հ. Տաշյան, Հետադոտական սլաոմություն մատենագրության Հայոց, «Հանդես ամսօրյա», 1969, էջ 293—324, 427—464, 1970, էջ 35—58:

52 Հ. Տաշյան, «Վարդապետություն առաքելոց» անվավերական կանոնաց մատյանը, էջ 21: